ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04.07.2019թ.
ժամը 14[15]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ. Հունանյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության գլխավոր մասնագետ Վ. Իրիցյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:
Բացակայում է՝ հանձնաժողովի անդամ, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյանը,

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
(Լ. Թազայան)

1.1 Քանի որ 28.06.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց նրա ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:
1.2 Հիմք ընդունելով վերը նշվածը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը **«Երևանի պետական համալսարան»** հիմնադրամի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար և որոշեց վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:
1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:
1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 14[15]-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Վ. Իրիցյան

Գնահատող Տ. Հունանյան

Գնումները համակարգող Լ. Թազայան